ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) և ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները (%)

Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի տարեկան տվյալները, ընթացիկ գներով, մլն.դրամ



ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %



2022թ. արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի նախնական տարեկան ցուցանիշը ընթացիկ գներով կազմել է 8 տրլ 496 մլրդ 777,9 մլն դրամ, 2021 վերանայված և 2020 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 6 տրլ 982 մլրդ 962,5 մլն և 6 տրլ 181 մլրդ 902,6 մլն դրամի պարագայում: 2022թ. իրական ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել 112.6%, 2021 և 2020 թվականների համապատասխանաբար՝ 105.7% -ի և 92.8%-ի պարագայում:

Տեղեկատվության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ամսական տեղեկագրերը:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվարին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 110.5%, 2022թ. հունվարին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 114.8%, իսկ 2021 թ. հունվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 91.5%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 177 մլրդ 691,2 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 3 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 40 մլրդ 352,9 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 16 մլրդ 26,9 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 912,1 մլն և 3 մլրդ 460,6 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 292 մլրդ 919,1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 62 մլրդ 68,8 մլն և 105 մլրդ 986,1 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվարին կազմել է 215 մլրդ 960 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 59 մլրդ 244 մլն և 86 մլրդ 160,1 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 101,4%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.6%-ի և 89.2%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 112.2%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.0%-ի և 100.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 117.7%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.5%-ի և 84.9%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 125.9%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.2%-ի և 89.7%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 40 մլրդ 134.5 մլն.դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 12.8 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 497 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 99 մլրդ 869 մլն. դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 10.6 և 31.4 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 35 մլրդ 476.2 մլն. դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1.97 և 7.9 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվարին կազմել է 2 մլրդ 211.5 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 264.7 և 514.9 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 96.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.1%-ի և 96.1%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 107.3%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 125.1%-ի և 81.7%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 92.8%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 121.3%-ի և 103.2%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 107.5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.2%-ի և 99.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվարին կազմել է 21 մլրդ 12.1 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 371,7 և 782.7 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվարին կազմել է 48 մլրդ 574.5 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 16.8 և 23.4 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվարին կազմել է 59 մլրդ 378.7 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 20 և 17.1 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 101.5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.2%-ի և 66.8%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 152.5%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.3% և 112.7%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 130.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.2%-ի և 111%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. հունվարին 2022թ. հունվարի նկատմամբ կազմել է 108.1%, 2022թ. հունվարին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.1%, 2021թ. հունվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.5%: ՍԳԻ-ն 2023թ.հունվարին 2022թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.4%, 2022թ. հունվարին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 101.6%, 2021թ. հունվարին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.2%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 1 տրլ 120 մլրդ 512 մլն դրամ, ինչը 23.6 մլրդ դրամով կամ 2.1%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 202.3 մլրդ դրամով կամ 22%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. հունվարի դրությամբ կազմել է 69060 մարդ, ինչը 16657 մարդով կամ 19.4%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 19869 մարդով կամ 22.3%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. հունվարի դրությամբ կազմել է 48357 մարդ, ինչը 9566 մարդով կամ 16.5%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 13400 մարդով կամ 21.7%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվարին կազմել է 1 մլրդ 299.9 մլն. դոլար, ինչը 629 մլն դոլարով կամ 80.3%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 885.5 մլն. դոլարով կամ 213.7% -ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2023թ. հունվարին կազմել է -154.3 մլն դոլար, ինչը 17.6 մլն. դոլարով կամ 10.2%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 65 մլն դոլարով կամ 72.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. հունվարին կազմել է 572.8 մլն դոլար, ինչը 323.3 մլն. դոլարով կամ 129.6%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 410.2 մլն դոլարով կամ 252.3%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. հունվարին կազմել է 727.1 մլն դոլար, ինչը 305.7 մլն. դոլարով կամ 72.5%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 475.3 մլն. դոլարով կամ 188.8%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվարին կազմել է 249278 դրամ, ինչը 44971 դրամով կամ 22%-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 56837 դրամով կամ 29.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 78,174.7 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -57,188.3 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -20,986.4 մլն դրամ: 2022թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 60,983.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -42,821.5 և -18,161.8 մլն դրամ: 2021թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 65,466.3 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -47,338.5 և -18,127.8 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ